

ԵՐԿՈՒ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ԼԻՔԱՆԱՀԱՅ ԿԵԱՆՔԷՆ

Ա.- Էջ Մը Պէյրուֆի 1918-20ի Հայկական Պատմութեան

Բ.- Լիբանահայութիւնը 1930ականներու Սկիզբին

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆ
adakessian@haigazian.edu.lb

Լիբանանի հայօճախին Ի. դարասկիզբի պատմութեան սպիտակ էջերը շատ են: Աւելի շատ են ընդհանրապէս այդ պատմութեան արձանագրուած բայց չգրուած եղելութեանց երեսակները, մանրամասնութիւններն ու վերլուծական մեկնաբանումները:

Անքարայի մէջ 20 Հոկտեմբեր 1921ին, ֆրանսական պատուիրակ Ֆրանքլին Պույոնի եւ քեմալական կառավարութեան միջեւ կնքուած համաձայնութեամբ 4¹ Նոյեմբեր 1921ին սկսած Կիլիկիոյ հայապարպումի երկամետայ պայմանաժամի ընթացքին², Լիբանանի ծովեզերքը 'բռնաթափուած' հայ կրկնաքտորեալներու սկզբնական հանգրուանի ու մինչեւ 1930-40ականներու (եւ այնուհետեւ) քեմիկերու կեանքի պատմութեան էջերուն բովանդակութիւնը կը մնայ նօսը եւ տարտամ: Անյստակութիւն կայ 1914-1921 շրջանի՝ Ա. Համաշխարհայինի հռչակումէն մինչեւ կիլիկեալութեան մնացորդացի մը Լիբանան տեղափոխումը երկարող եօթնամետայ հանգրուանին շուրջ: Յստակ չեն Մեծ Եղեռնի օրերուն աշխարհագրական Լիբանան հաստատուած գաղթականներուն փաստը³, այդ օրերուն պէյրութահայութեան վրայ բանեցուած խիստ ճնշումներուն մանրամասնութիւնները⁴, պատերազմի աւարտէն ետք Պէյրութ հաստատուած տարագրեալներուն պարագան:

Միւս կողմէն, յուշագրական դրուագներ կը նշեն Պէյրութի հայաբնակ քեմիկերու՝ գաղթակայաններու մասին, ինչ որ հարցադրումի կ'ենթարկէ անոնց գոյառումին դրդապատճառը⁵: Անպատասխան կը մնայ Պէյրութի կարգ մը տուններու մէջ արգելափակուած առեւանգեալ հայուհիներու պարագան⁶:

Չէ լուսաբանուած նաեւ Դաշնակիցներու արեւելեան Միջերկրականի ազատագրումով⁷, ներքին շրջաններէն՝ մեծաթիւ հայ տարագիրներու Պէյրութ խումբը. ասոնք՝ «*չորս ամսուայ մէջ [Հոկտ. 1918-Յունուար 1919] ... ամէն կողմէ բազմաթիւ հազարներով կը թափին եւ կը կեդրոնանան ծովեզերեայ քաղաքները, մանաւանդ կիլիկեցիները՝ անմիջապէս իրենց երկիրը վերադառնալու յոյսով: ... այսօր բոլորն ալ գործ-բան ձգած, կը խումբեն Պէյրութ, Թրիփոլի եւ այլուր...*»⁸....:

Աւելին՝ վերապահութեամբ պէտք է մօտենալ այն ըմբռնումին թէ լիբանահայ նորագոյն պատմութիւն կը սկսի Կիլիկիոյ պարպումին հետեւանքով Պէյրութ բերուած տարագիրներով: Որովհետեւ, 25 Մայիս 1920ին, Նիր Իսթ Ռիլիֆի եւ Ամերիկեան Կարմիր Խաչի

պաշտպանութեամբ Այնթապէն Հալէպ բերումը շուրջ 3000 որբերուն եւ այրիներուն (ներառեալ՝ անգլիացի Միս Ֆրիլըսընի աղջկանց որբանոցի եւ Եգիպտոսի Հայ Որբախնամի Այնթապի երկսեռ որբանոցի սաները) մեծ մասը ամիս մը ետք կը փոխադրուէր Պէյրութի Քարանթինան՝ երբ դեռ Կիլիկիոյ պարպումը թափ չէր առած եւ չէր հռչակուած Մեծն Լիբանան պետութիւնը⁹:

Գէթ Զինադադար-Կիլիկիոյ Բ. պարպում ժամանակա-հատուածին համար Հայ Ազգային Միութեան (ՀԱՄ) Պէյրութի մասնաճիւղին գործունէութեան ուսումնասիրութիւնը¹⁰ կրնար լուսաբանել այդ հանգրուանը: Որովհետեւ, 1916ին Գահիրէ հիմնուած ՀԱՄը շատ արագ կը տարածուի շարք մը գաղութներու մէջ, կը զգենու իրաւական հանգամանք, դառնալով Ազգային Պատուիրակութեան տեղայնացումը օղակը եւ ստանձնելով անառաջնորդ տարագիրներու իրաւական տիրոջ հանգամանք, Հայ Առաքելական Եկեղեցւոյ աջակցութեամբ¹¹:

Այս ծիրին մէջ պէտք է քննարկել հրատարակուող նամակ-տեղեկագիրը (եւ երկու նամակները): Ան¹² տուեալներ կը պարունակէ Ա. Աշխարհամարտի ասարտ-Կիլիկիոյ Բ. պարպում շրջանի լիբանահայ պատմութեան մասին: Նամակէն կարելի է հետեւցնել, որ Դաշնակիցներու Պէյրութ մուտքէն կարճ ժամանակ ետք¹³ - թերեւ Նոյեմբեր-Դեկտեմբեր 1918ին (նկատի առնելով որ Հալէպի մէջ ՀԱՄի մասնաճիւղը կը կազմուի 1918 Դեկտեմբերի 12ին) - տեղական ընտրութեամբ կը կազմուի¹⁴ ՀԱՄի Պէյրութի վարչութիւն-ներկայացուցչութիւնը, որ կը դառնայ Պէյրութի 'փոքրաթիւ' հայօճախին ղեկավար մարմինը, գլխաւոր գործառնոյթ ունենալով աքսորավայրերէն մազապուծ հայ խլեակներու Պէյրութ մէկտեղումը, անոնց սննդամատակարարումն ու ծննդավայր փոխադրումի կազմակերպումը¹⁵, որբերու եւ առեւանգեալ հայուիներու ազատագրումը եւն.¹⁶:

Փաստաթուղթին ուշագրաւ տեղեկութիւններէն են ա) Քարանթինայի (մաքրանոց) գաղթակայանին եւ այլ քնմիներու գոյութիւնը (ուր գաղթական հայութիւն մէկտեղուած է բ) գաղթականներու պատսպարումն ու հոգա-ծումը¹⁷, գ) մէկ ամսուայ ընթացքին (8 Յունիս¹⁸-15 Յուլիս 1919) անելի քան 3000 տարագիրներու վերադարձը եւ վերադարձի գործընթացին մանրա-մասնութիւնները, դ) տարագիրներու վերադարձի երեք ուղղութիւնները՝ Լաթաքիոյ վրայով Ալեքսանտրէթ, Մերսինի ճամփով Կիլիկիա, եւ Պոլսոյ ճամփով Պոլիս ու Իզմիր, ե) ՀԱՄի փոխարաբերութիւնները տեղական իշխանութեանց, Բարձր Գոմիսարութեան հետ եւն.:

Ինչ կը վերաբերի հրատարակուող երկու նամակներուն, ապա անոնք կը հաւաստեն ՀԱՄի Պէյրութի մասնաճիւղի կամրջային գործառնոյթը, երբ մասնաճիւղը կը ստանձնէ Արեւմուտքէն եկող ապրանքային օգնութեան քարափ հանելն ու անոնց առաքումը՝ Կիլիկիա:


Հրատարակուող երկրորդ փաստաթուղթը 1930ականներու սկիզբի լիբանահայ իրականության վերաբերող տեղեկագիր մըն է, որ գրուած է ի պատասխան 26 հարցումներու, որոնք կը թուփն ուղղուած ըլլալ ՀԲԸՄի Կեդրոնական Վարչութեան կողմէ¹⁹:

Տեղեկագիրը գրուած է խորամտօրէն, նախանձախնդրութեամբ, կացութեան քաջածանօթ անձի մը կողմէ, որ հեռանկարային մտահոգութիւններ ալ կը ցուցաբերէ: Ան շահեկանօրէն կը պարզէ լիբանահայութեան ցրտածուփանը, անոր ընկերատնտեսական անգոհացուցիչ եւ աղէտալի վիճակը, դպրոցներուն եւ եկեղեցիներուն շինութեան, պատկանելիութեան, եւ կազմակերպական անմխիթար վիճակը:

Տեղեկագիրը կ'արտացոլէ լիբանահայութեան ծնատրման ու կազմակերպման ճիգը: Պատմական կտրուածքով, շուրջ ութսունամեայ հեռատրութենէ յետադարձ ակնարկի հնարատրութիւն տուող այս փաստաթուղթին մէջ ուշագրաւ են – իմիջիայլոց – Նոր Մարաշ թաղամասի կերտումի տուեալները, Պուրճ Համուտի «Անդր Նահր» նախանունը, Մագրաայի մէջ հայկական բնակավայրի մը շէնացումը, քեմիի Ս. Խաչ եկեղեցին եւ շրջակայքի հայութեան գոյութիւնը եւ այս վերջին երկու հայկական տեղավայրերու չգոյութիւնը այսօր, որոնք արտայայտութիւնն են ժողովրդագրական տեղաշարժերուն:

Հրատարակուող բոլոր փաստաթուղթերը կը գտնուին Ռամկավար Ազատական Կուսակցութեան արխիւի Պէյրութի կեդրոնին մէջ: Զանոնք կը հրատարկենք կէտադրական եւ լեզուական նուազագոյն հպումներով:

[Ա.- Էջ Մը Պէյրութի 1918-20ի Հայկական Պատմութեան]



Ա. 20

Պէյրութ Յուլիս 20, 1919

Պարոն Մ[իրան]

Տամատեան²¹

Ընդհանուր Ներկայացուցիչ
Ամբողջական Հայաստանի
Պատուիրակութեան

Պարոն Ներկայացուցիչ

Պատերազմի հինգ երկարա-
տեւ տարիներէն յետոյ՝ ուր մեր
ազգը իր անզուգական բաժինն
ունեցաւ տառապանքի, ուր այս
տարաբախտ ժողովուրդը՝ քիրտօ-
րէն խլուեցաւ իր բնագաւառներէն
ցան ու ցրիւ նետուելու համար

աշխարհի չորս հողմերուն, գերագոյն պարտականութիւն մըն է մեզի՝ կարելիութեան սահմանին մէջ ձեռնտու ըլլալ մեղմելու այդ ցաւերը, ապահովելու տարագիրներու ներգաղթը, հաւաքելու որբերը, ազատագրելու գերիները, ցոյց տալու բովանդակ աշխարհին հայ ազգին միութիւնը, համերաշխութիւնը եւ կենսունակութիւնը:

Տոգորուած ահա այս զգացումներով՝ Պէյրութի Հայ Ազգային Միութեան նորակազմ մասնաժողովը ընտրուած Յունիս Տին քաղաքիս հայ գաղութին գրեթէ միաձայն քուէներով՝ անյապաղ գործի ձեռնարկեց:

Կացութիւնը՝ զոր նախկին մասնաժողովը կը փոխանցէր իրեն՝ ամենադժուարիններէն էր. արձանագրութիւնները անկանոն բռնուած կամ նոյնիսկ աղիկամի խանգարուած էին, բազմաթիւ թղթակցութիւններ ի կախ մնացած էին շաբաթներէ ի վեր, քննիչներ խռնուած խճողուած էին տարագիրներով, որոնք իրաւամբ կը տրտնջէին թէ պէտք եղածին պէս չէր զբաղուեր իրենց հայրենիք վերադարձի հարցով. գայթակղեցուցիչ յանձնաձում մը հիասթափութիւն կ'ազդէր եւ կասկածներ կ'արթնցնէր մտքերու մէջ, մեղադրեալներու բողոքները ու խորամանկութիւնները եւ մեքենայութիւնները իրենց համակիրներուն եւ հայրենակիցներուն շրջանակին մէջ՝ նորակազմ մասնաժողովը վարկաբեկելու եւ տապալելու, Բարձր Գոմիսիութեան²² եւ իշխանութիւններու հետ յարաբերութիւնները գրեթէ ձգտեալ վիճակ մը կը ներկայացնէին եւ հեռու էին խոհականութեան այն հանգամանքէն որ կ'երաշխատէր գործառնութիւններու հեշտիւ կատարումը:

Որքան ալ մեծ ըլլային դժուարութիւնները՝ նորակազմ մասնաժողովը չփատեցաւ. հազիւ կազմուած՝ անիկա փութաց գործի, բազմապատկեց իր գումարումները եւ երկարածգեց, աշխատեցաւ նկատի առնել բոլոր խնդիրները եւ լուծել զանոնք առանց ոեւէ կանխակալ դիտումներու եւ նախապաշարումներու, եւ հիմա, բոլորած իր պաշտօնավարութեան առաջին ամիսը՝ անիկա գոհունակութեամբ եւ հպարտութեամբ կը դիտէ ձեռք բերուած արդիւնքը:

Պիտի փորձենք, Պարոն ներկայացուցիչ, հակիրճ տեղեկութիւն մը Ձեզի տալ կատարուած աշխատութիւններու վրայ:

1) Հաշուեյարդար Նախկին Յանձնաժողովի Յանձնաձումին.- Ձեր Պէյրութէն անցած ատեն արդէն պատիւն ունեցանք խօսակցելու նախկին հաշուակալութեան անկանոնութիւններուն մասին: Նախկին մասնաժողովը քննիչ յանձնախումբ մ'անուանած էր իր իսկ անդամակիցներէն կազմուած՝ որ երկար հետազօտութիւններէ վերջ յանգեր էր սա եզրակացութեան թէ ծանրակշիռ անկարգութիւններ գոյութիւն ունին հաշիւներու մէջ, ք՝ ցայտուն կերպով մատնացոյց ըրած էր նախկին դիւանի պատասխանատուութիւնը: Սակայն նոյնիսկ հաշիւներու մէջ գոյութիւն ունեցող այդ գայթակղիչ անկարգութիւններու պատճառաւ, կարետոր բազմաթիւ վաներաթուղթերու չգրութեան կամ անհետացումի եւ տոմարներու մէջ կամատր ըլլալու բոլոր

երեսյթները ցուցադրող անկանոնության մը պատճառով՝ անկարելի եղած էր որ նախկին քննիչ յանձնախումբը վերջնական եզրակացութեան մը յանգէր: Այսուհանդերձ, այն հետետեւութիւնը՝ որուն հասեր էր՝ բաական էր նախկին մասնաժողովին գործէ ձեռնադիութիւնը հարկատու ընելու համար: Ազգային Ընդհանուր Ժողով մը՝ ստիպողաբար գումարաւած եւ կացութեան լիովին իրազեկ եղած՝ իսկոյն ձեռնարկեց արդի մասնաժողովի ընտրութիւնը:

Ասիկա՝ վերջնական լուծում մը տալու համար սոյն ծանրակշիռ խնդրին եւ խարանելու համար յանցապարտները՝ որոշեց կազմել եւ արդեամբ ալ կազմեց նոր քննիչ յանձնախումբ մը՝ մասնաժողովին անդամներէն դուրս եղող անձերէ բաղկացեալ, որոնք են.- պարոններ Աղճայեան, Քալըպեան, Աֆճէր, Սնըքճեան եւ Տոքթ. Պետատուրեան: Այս վերջինը անդամակցելով հանդերձ մասնաժողովին՝ անդամ նշանակուեցաւ քննիչ յանձնախումբին, նախ՝ մեր մասնաժողովը ներկայացնելու համար եւ երկրորդ՝ առաջին քննութեան աշխատութիւններուն լաւատեղեակ ըլլալու պատճառով:

Նորակազմ քննիչ յանձնախումբին աշխատութիւնները դիւրացնելու համար՝ մեր մասնաժողովը անոր տրամադրութեան տակ դրաւ բոլոր տոմարները, գրութիւնները, ցուցակները, վաւերաթուղթերը որոնք քննութեան ունէին լուսաբանելու այս կարգի դժուարին եւ կենդոտ աշխատութիւններ: Քննութիւնը արդէն բաական յառաջացած է եւ կը յաւանք քիչ առնենէն ձեռք բերել վերջնական տեղեկագիրը զոր պատիւ պիտի ունենանք Ձեզի ներկայացնելու:

2) Կանոնաւորում Տոմարներու.- Առաջին օրէն իսկ մասնաժողովը փութաց այցելել եւ քննել քեմիքը, որոնց թերակատար, անկանոն եւ ըստ հաճոյս խանգարուած տոմարները²³ ամենախիստ քննութեան ենթարկուեցան: Այնուհետեւ ամենականոնաւոր կերպով սկսաւ տեղի ունենալ ժամանումներու եւ մեկնումներու արձանագրութիւնները եւ կարելի եղաւ մօտատու հաշուով վերահասու ըլլալ Պէյրութի տարագիրներու ճշգրիտ թիւը, անոնց քնակավայրերով եւ ժամանումի եւ մեկնումի օրերով: Յետոյ նպաստի բաշխումը տեղի ունեցաւ ամէնէն գոհացուցիչ եղանակով եւ կարելի եղաւ գոհունակութեամբ դիտել արգիլումը ամէն տեսակ զեղծումի:

3) Թղթակցութիւն.- Միութիւնը փութաց տեղեկանալ այն բազմաթիւ նամակներէն՝ որոնք շաբաթներէ իվեր եկած ու դիզուած էին, այդ գրութիւններով պահանջուած բոլոր ձեռնարկներն ու դիմումները կատարեց, իր նամակագիրներուն հայթայթեց այն բոլոր ծանօթութիւնները զորոնք կը խնդրէին եւ զորոնք կըցաւ ձեռք բերել²⁴:

4) Բարձր Գոմիսարութեան եւ Իշխանութիւններուն հետ Յարաբերութիւնները.- Առաջին օրերուն Բարձր Գոմիսարութեան եւ միւս վարչական պաշտօնարաններու հետ յարաբերութիւնները չոր ու դժուարին էին, ամէն վայրկեան յայտնի չկամութեան կը բախէինք. յետոյ համոզուեցանք թէ իրերու այդ վիճակը գլխաւորապէս յառաջ կու գար

ճշտապահության, ուղղամտության եւ փափկանկատության պակասէն, որով կը յանդիմանէին նախկին դիանը:

Առանց մտնելու տաժանելի մանրամասնութիւններու մէջ՝ բաւական կը համարինք ըսելու թէ այդ յանդիմանութիւնները կ'արտայայտուէին ամէնէն ճշգրիտ, ամէնէն բոռն եւ ամէնէն նուաստացուցիչ բառերով: Դժբախտաբար ինքնաբերումի ու ուժգնութեան այս հանգամանքը մտքի ծայրայեղօրէն անբարեացակամ վիճակ մը կը մատնանշէր մեզի հանդէպ ի մեծ վնաս ազգին շահերուն եւ պատուոյն:

Հարկ եղաւ ուրեմն արտագոյ կարգի մեղմութիւն եւ փափկանկատութիւն կիրարկել բարեւաւելու համար այդ դժնդակ կացութիւնը. բարեբախտաբար յաջողութեամբ պսակուեցան մեր ջանքերը: Յարաբերութիւնները երթալով բարոտքեցան եւ նոյնիսկ բարեկամական դարձան: Ամէնուրեք մեզի հանդէպ բարեհամբոյր համակրութիւն ցոյց կը տրուի. պաշտօնական շրջանակներու մօտ կատարուած ոչ մէկ խնդրանք մերժումի չէ հանդիպած: Քանի քանի անգամներ սիրայիր եւ անկեղծ գոհունակութիւն մը յայտնուեցաւ մեզի այն կանոնատրութեան, ճշտապահության եւ անկեղծ ուղղամտութեան համար՝ որ կը տիրեն մեր բոլոր գործառնութիւններուն եւ աշխատութիւններուն մէջ:

Յարաբերութիւններու այս բարոտքումի շնորհիւ է որ մէկէ աւելի նախապաշարումներ փարատեցան, շատ մը կանխակալ կարծիքներ անհետացան, եւ մէկէ աւելի ֆրանսացիներ հարկադրուեցան փոխելու հայու մասին ունեցած կարծիքին:

Աւելորդ է ըսել թէ այս բարեացակամ տրամադրութիւնները լայնօրէն օգտագործուեցան կարելի սահմանին մէջ մեղմելու համար մեր սիրելի եւ անբախտ տարագիր եղբայրներուն տառապանքները, փութացնելու համար անոնց դէպի հայրենիք վերադարձը, եւ հայթայթելու համար անոնց այն բոլոր դիւրութիւնները որ կրնային ամոքել անոնց ողորմելի եւ թշուառ վիճակը:

5) Ներգաղթը.- Ահա կը հասնինք մեր ներկայ տեղեկագրին ամէնէն կարեւոր կէտին, միանգամայն մեր վարչութեան այս առաջին ամիսին միջոցին գործունէութեան ամէնէն բերկրառոյթ, ամէնէն մխիթարական արդիւնքին:

Պաշտօնի ձեռնարկած ատեննիս քաղաքիս մէջ կը գտնուէին հազարէ աւելի տարագիրներ՝ որոնք շաբաթներէ ի վեր կը սպասէին վերադարձի՝ դէպի իրենց սեփական հայրենիքը: ԳայՖա²⁵ 2001՝ աւելի ապաստանեալներ յետին կարօտութեան եւ ամենակատարեալ թողլըւմի պատկերը կը ներկայացնէին եւ ժահահոտ մաքրանցի²⁶ մը մէջ ծուարած կը մնային՝ ժանտատենդի եւ թանջքի մշտապէս ենթակայ: Տրիպոլիս՝ քսանէ աւելի տարագրեալներ՝ զուրկ ամէն միջոցէ, իրենց յետին անձկութեան կոչը կ'ուղղէին մեզի:

Մեր առաջին հոգն եղաւ հետապնդել ամէն պատեհութիւն՝ ի հարկին ստեղծել եւս առիթներ, օգտուելու համար անոնցմէ ի նպաստ մեր տարագիրներուն դէպի հայրենիք վերադարձին:

Առաջին շաբաթին իսկ մխիթարութիւն ունեցանք հայրենիք դարձնելու այդ բազմութիւնը: Յունիս 10ին Cerebère մարտանալը դէպի Գայֆա կ'ուղղուէր մեր 200 տարագիրները առնելու համար: Վերադառնալով Նոյն ամսուն 12ին կը մեկնէր դէպի Մերսին 200 ուղեւորներով: 13ին դէպի Հալէպ ճամփու կը դնէինք 150 հայեր յատուկ շոգեկառքով: Վերջապէս 14ին՝ Corinthia շոգենատով դէպի Ջմիտնիա եւ Կ. Պոլիս կը դրկուէին 600 չափ տարագիրներ:

Ահա այն միջոցին էր որ վերջապէս հարկադրուեցանք ենթարկուելու Բարձր Գոմիսարութեան եւ անգլիական իշխանութեանց կողմէ Յունիսի սկիզբները տրուած յորոշումի մը, որուն գործադրութեան յետաձգումին՝ կարելի եղածին չափ երկարատեւ՝ հետամուտ եղած էինք, մինչեւ որ Պէյրութ ապաստանած բոլոր տարագիրները ճամփայ հանուէին: Խնդրոյ առարկայ որոշումը կը վերաբերէր նախ դադրեցումին ամէնօրեայ 1,25f այն նպաստին, որ Բարձր Գոմիսարութիւնը մինչեւ Նոյն ատեն Պէյրութէն անցնող տարագիրներէն իւրաքանչիւրին վճարէր էր, եւ երկրորդ՝ բոլոր գաղթականներու մաքրանցի քեմիին մէջ կեդրոնացումին, ուր անոնք նոյնիսկ կառավարութեան կողմէ պիտի կերակրուէին:

Այս տնօրինութիւնը, որ ամէնաբոլորն ընդդիմութեան պիտի բախէր հին²⁷ քեմիերու ազատութեան – համեմատական ազատութիւն անշուշտ – վարժուած տարագիրներու կողմէ չէր կրնար գործադրուիլ եթէ ոչ նորեկներու մասին որ ուղղակի պիտի դրկուին նոր քեմիլը՝ Պէյրութ հասածին պէս:

Յունիս 25ին հայրենիք դրկուելու 100 հոգիի չափ միայն ունենալով հարկադրուեցանք համակերպիլ ֆրանսական եւ անգլիական իշխանութիւններու կողմէ բազմիցս կրկնուած հրամաններուն եւ տարագիրներուն իրենց նոր քեմիլը փոխադրութեան ձեռնարկել:

Յունիս 25էն մինչեւ 6 Յուլիս իոս հասան Դամսկոսէն 1600, Փոր Սայիտէն 300²⁸ եւ ուրիշ զանազան տեղերէ 100 տարագիրներ. բոլոր այս բազմութիւնը զետեղուեցաւ մաքրանցը:

Թէեւ իշխանութիւնները զերծ կացուցած էին զմեզ հայ տարագիրներու հոգատարութենէն, սակայն մենք չընդունելով հանդերձ մեր կողմէ որեւէ պատասխանատուութիւն գործի մը մէջ որ մեր վարչութեան հաստիքներէ դուրս կը մնար՝ չդադրեցանք օգտագործելու մեր բարոյութեամբ յարաբերութիւնները պատկանեալ իշխանութիւններու հետ՝ հայթայթելու համար մեր եղբայրներուն բոլոր կարելի օժանդակութիւնները: Այսպէս,

Ա) Իրենց փոխադրութեան համար ինքնաշարժ սայլեր, իբր բացառիկ շնորհք մը՝ ամէն օր կը ժամանէին նաւամատոյցը կամ կայարանը՝ քեմի փոխադրելու համար անոնց գոյքերը, ինչպէս նաեւ անոնց մեկնումին օրը

միեւնոյն սայլերը պիտի փոխադրէին դէպի նաւահանգիստը այդ միւսնոյն գոյքերը եւ ւաւելի կամ նուազ տկար կիները, խնայելով այսպէս մեր տարագիրներուն անլուր տազնապներ, անվերջ նեղութիւններ, իրենց ունեցած կամ մեր տրամադրել կրցած միջոցներէն բացարձակապէս գերիվեր ծախքեր:

Բ) Կարգատրութեան համար, անհրաժեշտ էր այս խաժամութ ամբոխին մէջ կարգ եւ կանոնատրութիւն մը ներմուծել, ցուցակներ կազմել, տոմսակներ բաժնել, իւրաքանչիւրը՝ ուղեւորութեան նպատակակէտի համեմատ զատորոշել եւ դասատրել, առաջնորդել, նաւ դնել եւն.: Այս գործին համար կարգի սպասարկութիւն մը կազմակերպուեցաւ որ թանկագին օգտակարութիւն մը ունեցաւ, յատկապէս մեկնումի օրերուն:

Գ) Իրենց մեկնումի համար, անհրաժեշտ էր փութացնել անոնց մեկնումը իրենց հայրենիքը, եւ ասիկա դիւրին գործ մը չեղաւ ինչպէս որ դիւրին չէր նաեւ նախընթաց երկու հատուածներու մէջ յիշատակուած գործողութիւնները: Ասոր համար պէտք եղաւ հայոյ բովանդակ տոկունութիւնը, պէտք եղաւ բազմապատկել դիմումները, թախանծել, պնդել, երբեք չյուսահատիլ. վերջապէս լիակատար յաջողութիւն մը ձեռք բերինք:

Յուլիս 3ին 95 հոգի կը մեկնէր դէպի Հալէպ եւ յաջորդ օրերուն իբր 60 (այս վերջին շաբաթը 100 նաեւ) ուրիշ անձերու մեկնումը կ'ապահովուէր:

Յուլիս 4ին 1550 հոգի դէպի Զմիւտնիա եւ Պոլիս ճանապարհ կ'ելլէին ռուսական Imperator փառատոր շոգենաւով՝ որ այդ նպատակաւ յատկապէս վարձուած էր ներգաղթի անգլիական սպասարկութեան կողմէ, ինչպէս նաեւ շնորհիւ բարեացակամ հոգածութեան Բարձր Գոմիսարիութեան կցորդ Տեղակալ Le Hagoët, որ ամբողջ այս ժամանակաշրջանին մեր հայ տարագիրներու հանդէպ անգնահատելի բարոյթիւն մը, անխոնջ եւ ամէն գովեստէ վեր անձնուիրութիւն մը կը ցուցադրէր:

Հուակ ուրեմն, Յուլիս 8ին 330 ուղեւորներ Cerbère մարտանաւը կը մտնէին Լատողիկէ, Փոքր Աղեքսանդրիա եւ Մերսին երթալու համար:

Այս թիւերուն վրայ ւաւցնելով նաեւ նուազ կարելւոր մեկնումներ այս ամսունք մէջ (Յունիս 9-8 Յուլիս) հայրենիք վերադարձողներու 3100²⁹ պատկառելի համագումար մը կ'ունենանք:

6) Իսլամներու քով արգելափակուած աղջիկներ.- Գործօն եւ անընդիստ հետազօտումներ կատարուեցան զանոնք երեան հանելու համար, ազդու դիմումներ տեղի ունեցան իշխանութիւններու մօտ, բացայայտ խոստումներ ձեռք բերինք թէ այդ աղջիկները պիտի ազատագրուին, միայն թէ քաղաքական կարգի ինչ ինչ նկատումներ ատենի մը համար կը հարկադրէին կառավարութիւնը յետաձգել այդ խոստումի իրագործումը:

Իբր տասնօրեայ ժամանակ վերջ՝ որովհետեւ այդ աղջիկներէն ոմանք ծանրակշիռ վտանգներու ենթակայ էին՝ մեր ատենապետը՝ Պ. Ժորժ Փիքոյէն³⁰ խնդրուած ունկնդրութեան մը պահուն, ամենաազդու

ցուցումներով այդ թշուառ կալանատրուիներու անմիջական ազատագրումի վրայ, հերքեց բոլոր առարկութիւնները եւ ցոյց տուաւ թէ խնդրոյ առարկայ դեռատի աղջիկներուն ազատագրումը՝ մարդասիրական, արդարութեան եւ քաղաքակրթութեան պարտականութիւն մըն էր:

Այս դիմումին հետեանքով Բարձր Գոմիսարութիւնը ամենախիստ հրամաններ տուաւ որպէսզի Պէյրութի զանազան տներու մէջ արգելափակուած այդ հայուհիներուն ազատումին ձեռնարկուի:

7) Ուսանողները.- Գիտէք անշուշտ, Պարոն Ներկայացուցիչ, թէ ինչպէս հինգ ամիսի չափ առաջ Միութեանս նախագահը՝ Տոքթ. Պ. Մելքոնեան³¹, ինպաստ ուսանողներու միջնորդած է Բարձր Գոմիսարութեան մօտ եւ թէ՛ այդ դիմումին հետեանօք, Պ. Փիքօ բարեհաճեր էր վճառել հայ բոլոր կարօտեալ ուսանողներու³² (շուրջ 25) քննութեանց եւ արձանագրութեանց ծախքերը (շուրջ 8000ֆ) շնորհք մը՝ որ չտրուի ցաւ ուրիշ ոեւէ անձի:

Ուսումնական ամավերջին՝ մեր դիմումներու վրայ Բարձր Գոմիսարութիւնը դիւրութիւններ տուաւ այդ ուսանողներէն ամէն անոնց որոնք ուզեցին իրենց հայրենիքը մեկնիլ:

Վերջացնելով այս հակիրճ տեսութիւնը, բարեբախտ կը համարենք ինքզինքնիս, Պարոն Ներկայացուցիչ, ծանուցանելու Ձեզի թէ լիովին հանդարտած եւ խաղաղած է ազգին մէջ տիրող այդ վրդովումն եւ յուզումը զոր Դուք եւս նկատեք էիք Պէյրութէն անցած միջոցնիդ: Ամենակատարեալ միութիւն եւ համերաշխութիւն կը տիրէ այժմ համայն անդամներուն մէջ ազգին՝ որ անխռով եւ վստահութեամբ կը սպասէ իր վաղուան նորին:

Ի դիմաց Պէյրութի Հայ Ազգ. Միութեան
Վասն ատենադպիրի Ատենապետ
Պօղոս Վ. Արիս Տր. Պ. Մելքոնեան
Քարտուղար

Բ.³³

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ
ՊԷՅՐՈՒԹ
UNION NATIONALE ARMÉNIENNE
B.P. 112

Պէյրութ, 23 Դեկտ. 1919

Թիւ 15

Պարոն Մ. Տամատեան
Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան
Ներկայացուցիչ Ի Կիլիկիա
Ատանա

Պարոն Ներկայացուցիչ

Ազգ. Միութիւնս West Hobokenի Հայ Կարմիր Խաչէն 35 հակ հազուատ ստացաւ վերջերս՝ Մերսինի Կարմիր Խաչի ձեռքով դրկուելու համար

Կիլիկիա՝ ուր պէտք է բաշխուին կարօտեալներուն: Մենք ղրկեցինք Կարմիր Խաչին Կեդրոնական Վարչութեան յԱտանա Մերսինի Կարմիր Խաչի ծեռքով: Մերսինի Ազգ. Միութիւնը սոյն հակերը բռնեց առարկելով թէ իրենց յատկացուած են: Նոյնպէս ալ մեր Ատանայի Կ. Խաչին գրած նամակը առին ու բացին: Այս գործելակերպը զմեզմատ զարմացուց մանաւանդ թէ ինչպէս մարդ կրնայ երեակայել թէ Մերսինի պէս փոքրիկ գիւղ մը մօտ 2800 քիլօ հազուստ իւրացնէ եւ անդին Ատանայի, Հաճընի եւն.ի հազարատու թշուառները զուրկ մնան: Բայց եւ Ամերիկայի Կ. Խաչի նամակները որ մեր ծեռքը կը գտնուին, որոշապէս կ'ըսեն թէ սոյն հազուստները Կիլիկիոյ այլեայլ շրջաններուն մէջ պէտք է բաշխել:

Այս խնդիրը կը յանձնենք ձեր լուրջ ուշադրութեան: Ատանայի Կարմիր Խաչը կրնայ հաղորդել Ձեզ մանրամասնութիւններ:

Մնամք խորին յարգանօք

ի դիմաց Ազգ. Միութեան

Քարտուղար Ատենապետ

Պօղոս Վ. Արիս Տր. Պ. Մելքոնեան

Գ.³⁴

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ՊԷՅՐՈՒԹ

UNION NATIONALE ARMÉNIENNE

B.P. 112

Beyrouth, le 27 Փետր. 1920

Մեծայարգ Տիար

Միհրան Տամատեան

Լիազօր պատուիրակ Միացեալ անկախ Հայաստանի

եւ Հայ Ազգային Պատուիրակութեանց

Ատանա

Մեծայարգ Տիար

Մերսինի Հայ Ազգ. Միութեան միջոցով եւ ինչպէս կարգ մը մարաշցի փախստականներէ իմացանք մանրամասնութիւնները Մարաշի եւ շրջակայից կոտորածներուն: Պէյրուսի հայ փոքրաթիւ գաղութը եւ Ազգային Միութիւնս խորապէս յուզուած են պատահած աղէտէն եւ նորանոր ջարդերու հաւանականութեան համար: Ազգային Միութիւնս պատկանեալ իշխանութեանց մօտ դիմումներ կատարեց բարոյական եւ եփօական անմիջական աջակցութեանց առաքման համար: Միւս կողմանէ ամսոյն ձեռնարկները զորս շուտափոյթ գործադրել պատշաճ նկատեցինք կացութիւնը պարզելու համար արտաքին աշխարհին՝ Գահիրէ, Նիւ Եորք, Լոնտոն այս վայրերուն Ազգային Միութեանց մանրամասն անթէլ հեռագիրներ ղրկել ձեռնարկեցինք, բայց չի յաջողեցանք տակաւին. Առաջին առթիւ կ'սպասենք ղրկելու համար հեռագիր մը արդէն

յաջողեցանք դրկել Հոռվմ իտալական II *Motino* թերթին դրկուեցան մանրամասնութիւններ լուսանկարներով: Ուրիշ յօդաւածներ պիտի երեւան այս մասին: Շարունակական եւ լուրջ ձեռնարկներ եղան Զօրավար Կուրոյի³⁵ մօտ, իր ուշադրութիւնը հրաւիրելու համար ամբողջ Կիլիկիոյ ծանր կացութեան մասին Միութեանս նախագահի կողմէն: Իրեն հաւաստուած է թէ զինուորական նոր ուժեր դրկուած են Կիլիկիա, թանքերով եւ օդանաւերով:

Պատահած դէպքերու մասին լուր տրուեցաւ հիպատոսական մարմիններուն: Պ. Զաքարիա Պզտիկեան մեր կողմէն Գահիրէ պիտի երթայ անհրաժեշտը իրագործելու համար: Մինչ այս, մենք կը շարունակենք աշխատիլ, մեր կրցած սահմանին մէջ: Պիտի խնդրէինք որ Զեր թելադրութիւնները հաճէիք ընել մեզ, եթէ հարկ տեսնէք տարբեր ուղղութեամբ աշխատելու համար: Մեր աշխատանքը կը ներշնչուի մեր ստացած տեղեկութիւններէ: Հաճէիք անհրաժեշտ թելադրութիւններ չի զլանալ մեզ անելի լայնօրէն կարենալ բերելու համար մեր ջանքերը իսպառ փտանգի մէջ եղող մեր ժողովուրդին:

Ընդունեցէք Տիար, մեր խորին յարգանքները

Ի դիմաց Պէյրութի Հայ Ազգ[ային] Միութեան
Ատենադպիր Ատենապետ

Տր. Պ. Մելքոնեան

Բ. ՏԵՂԵԿԱԳԻՐ ԼԻՔԱՆԱՆԻ ԹԵՄԻՆ³⁶

Ա. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Հարցում 1.- Ի՞նչ է իւրաքանչիւր թեմին վարչական կազմութեան այսօրուան վիճակը: Ինչպիսի՞ ժողովներ կան: Ի՞նչպէս եւ ե՞րբ կազմուած են անոնք եւ որչա՞փ կանոնատրութեամբ կը կաւարեն իրենց պարտականութիւնները:

Պատ.- Լիբանանի ազգային վարչութիւնը ներկայիս կը բաղկանայ Ազգ. Սահմանադրութեան նախատեսած բոլոր ժողով ու խորհուրդներէն, բացի Գաւառ. Ժողովէն, որ 1929 Մարտէն իվեր կազմալուծուած է, անդամներէն ոմանց հրաժարումով, ոմանց քաղաքէ հեռացումով եւ ոմանց մահով³⁷:

Վարչութեան քաղաքական ժողովը կը բաղկանայ ինն անդամներէ, նշանակուած ուղղակի Վեհափառ Հայրապետէն, որը նոյն ատեն հարկեցուցիչ պատճառներով ստիպուած է եղեր թեմիս մէջ կախակայել Ազգ. Սահմանադրութեան ընտրական տրամադրութիւնները, անորոշ ժամանակի մը համար:

Քաղաքական ժողովը իր կողմանէ նոյնպէս նշանակովի կազմած է Տնտեսական, Ուսումնական, Դատաստանական եւ Թաղական խորհուրդները: Կրօնական ժողովի գործերը կը կատարէ Քահանայական

ժողովը, կեդրոնի տասը քահանայից մասնակցութեամբ, որ Սրբազան Առաջնորդին նախագահութեան տակ կը գումարով տասնեւինգ օրը անգամ մը: Միա ժողով ու խորհուրդները կը գումարեն շաքաթը մէկ անգամ անպատճառ, իսկ երկու կամ անելի անգամներ՝ հարկը պահանջած ատեն:

[Հրց.] 2.- Քանի՞ եկեղեցի կայ իւրաքանչիւր թեմի մէջ: Ե՞րբ շինուած են: Քանի՞ քահանայ ունի իւրաքանչիւր եկեղեցի. ի՞նչ է անոնց կարողութիւնը իբրեւ քահանայ: Պէտք կա՞յ նոր քահանաներու, եթէ այո՞ր քանի՞ քահանայի եւ ու՞ր տեղերու համար:

(Ծանօթ.) Իւրաքանչիւր քահանայի կենսագրութիւնը պատրաստել տալ եւ կցել ընդի. տեղեկագրին³⁸:

[Պատ.] - Լիբանանի Թեմին մէջ կան ընդամէնը ինը եկեղեցիներ: Հինգը քաղաքին մէջ, չորսը՝ գաւառները: Քաղաքին եկեղեցիները կը կոչուին 1) Ս. Նշան, առաջնորդանիստ եկեղեցին, 2) Ս. Խաչ, մեծ քեմիկը, 3) Ս. Երրորդութիւն, Ամանոս թաղինը, 4) Ս. Լուսաւորիչ, Անդր Նահրինը, 5) Ս. Աստուածածին, Էշրեֆիէյինը³⁹: Գաւառներէն 6) Զահլէի եկեղեցին կը կոչուի Ս. Լուսաւորիչ, իսկ 7) Ճունիի, 8) Թրիփոլիի եւ 9) Սայտայի եկեղեցիները անանուն են, սեփական շէնք չունենալուն համար: Ասոնցմէ՛ զատ քաղաքին մէջ կառուցանելի են երկու եկեղեցիներ ազգապատկան հողի վրայ, մին ՆՈՐ ՄԱՐԱՇԻ մէջ⁴⁰, որուն հիմնօրինէքը կատարուեցաւ Լուսաւորիչ - Մտին ի Վիրապի Կիւրակէին մեծ խանդավառութեամբ, միւսը՝ Ռըմէյլ թաղին մէջ⁴¹, որուն քարտէսները ներկայացուեցան պատկան իշխանութեան արտօնութիւնը ստանալու համար: Էշրեֆիէյի եկեղեցին կը պատրաստուի սեփականացնել իր գետինը, որ 3000 կանգուն տարածութիւն ունի: Մասնաւոր յանձնախումբ մը երկու տարիէ իվեր կ'աշխատին ճարելու պէտք եղած գումարը՝ անելի քան 800 հնչուն ոսկի, որուն գրեթէ կէսը ապահովուած է արդէն:

Բացի առաջնորդանիստ Ս. Նշանէն եւ Զահլէի Ս. Լուսաւորիչէն, որոնք քարաշէն են, մնացեալ բոլոր եկեղեցիները փայտակերտ են, հապճեպով կանգնուած գաղթականութեան սեւ օրերուն: Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ կը պաշտօնավարեն երեք քահանաներ, Անդր Նահրի եկեղեցւոյն մէջ միայն մէկ քահանայ, քաղաքին մնացեալ երեք եկեղեցիներն ալ երկուական քահանայ կը կառավարեն: Գաւառի չորս եկեղեցիները նոյնպէս կը կառավարեն մէկական քահանաներ, որով եկեղեցիներուն թիւը կ'ըլլայ ինը, իսկ քահանաներունը՝ տասնչորս:

* Քահանայ հայրերը, բացի երկու-երեքէն, պարզ ծիսակատարներ են: Պէտք կայ նոր քահանաներու՝ Ալէյի, Պիքֆայայի, Ճըպէյի եւ Ղազիրի ժողովուրդին համար: Քահանայ հայրերուն կենսագրութիւնները կցուած են:

[Հրց.] 3.- Ի՞նչ կալուածներ ունի եկեղեցին. ո՞րչափ հասոյթ կը բերեն ապոնք տարեկան եւ ի՞նչպէս կը գործածուին:

Պատ.- Թեմիս եկեղեցիներէն եւ ոչ մին հասութեաբեր կալուած ունի: Միայն Ս. Իսաչ եկեղեցին իր շրջափակին մէջ կրցեր է յարմարցնել քանի մը տախտակաշէն կրպակներ, որոնցմէ կը ստանայ 600 Սր. Ոսկիի գումար մը տարեվարձ: Թէ՛ կրպակները եւ թէ՛ նոյնիսկ եկեղեցին ենթակայ են մօտերս քանդուելու իշխանութեանց կողմէ՜, քեմիներու ջնջումին հետեանքով:

[Հրց.] 4.- Ո՞րչափ է առաջնորդարանիդ փարեկան ելեմուտը եւ ո՞րչափ հաստատուն է այդ:

Պատ.- Թեմիս առաջնորդարանի տարեկան պիտոճէն է 20700 Սր. Ոսկի, որ ամէն տարի կարետոր բաց մը կը թողու: Պաշտօնէութիւնը կը բաղկանայ քարտուղարէ մը, գործակատարէ մը ու պահակէ մը: Այս տարի հաստատուեցաւ մութաթաայի⁴³ դրութիւն՝ վիճակայիններու վրայ, նոյնպէս կեդրոնին մէջ՝ Ազգ. Տոբքը, որը կարելի չեղաւ տակաւին ընդհանրացնել:

[Հրց.] 5.- Եկեղեցոյ զուտ ներքին հասոյթները - զոր օրինակ պատարագ, պսակ, մկրտութիւն, թաղում, պնակներ են. - ո՞րչափ են եւ ի՞նչպէս կը գործածուին այրոնք:

Պատ.- Եկեղեցիներու հասոյթները, պատարագի պնակ, պսակադրում, մկրտութիւն, թաղման եւ ա՛յլ իրատնք ամբողջովին յատկացուած են վարժարաններու մատակարարութեան: Եկեղեցիներուն ջնջին մաս մը հազիւ բաժին կը հանուի՝ խումկը եւ մօմը ապահովելու աստիճան, որմէ է եկեղեցիներու առհասարակ խաւար ու խեղճ մնալը:

Բ. ԺՈՂՈՎՈՒՐԴ

[Հրց.] 6.- Ո՞րչափ է թիւը Հայաստանեայց եկեղեցոյ ժողովուրդին իւրաքանչիւր թեմի մէջ: Նշանակել զայր զայր քաղաքներու եւ գիւղերու մէջ գտնուողներուն թիւերը, անոնց բնիկ ո՞րտեղացի ըլլալը, անոնց գբաղումները իրենց ընդհանուր գիծերուն մէջ:

Պատ.- Կարելի չէ որոշ կերպով սահմանել Լիբանանի թեմին հայութեան թիւը: Կանոնաւոր մարդահամար տեղի չէ ունեցած եւ հնարատրութիւն ալ չկայ ըլլալու՝ ներկայ միջոցներով: Ոմանք 25, ոմանք մինչեւ 40 հազարի կը հասցնեն թիւը, որուն կարետոր մէկ մասը կը բնակի քաղաքը եւ քիչ շատ բարեկեցիկ են:

Պէտրութի մէջ կը գտնուին Անատոլիոյ բոլոր քաղաք եւ ամաններէն մարդիկ, որոնք իրենց համաքաղաքացիներուն հետ ուրոյն հաստատուած չեն, այլ հոս ու հոն խառն կը բնակին՝ խարբերոցին պրուսացիին, ատանացիին, ատիամանցիին հետ կողք-կողքի, ոսկից ծնունդ առած է բարբերու եւ սովորութիւններու սոսկալի խառնակութիւն մը:

[Հրց. 7].- Ի՞նչ են ժողովուրդի բնակարանի պայմանները: Ի՞նչ բանի պէտք կայ այս կողմէն:

Պատ.- Բնակարանի պայմանները պարզապէս խղճալի են: Խոնաւ հողի վրայ շինուած, եղանակներու խստութիւններու նշաւակ, մէկ-մէկ որջեր եւ հիւանդութեան բոյներ են բնակարան ըսուածները. անհրաժեշտ է անպայման փոխել այդ պայմանները:

[Հրց.] 8.- Ամուսնական ի՞նչպիսի խնդիրներ կան ժողովուրդին մէջ, որոնցմով կը զբաղի Առաջնորդարանը:

Պատ.- Առաջնորդարանը զբաղեցնող ամուսնական գլխաւոր խնդիրները այր ու կնոջ խառնումածքի եւ մէկմէկու սովորութեանց անվարժ ու անհմուտ ըլլալէ առաջ եկած անհամաձայնութիւն եւ անհասկացողութիւններ են ըստ մեծի մասին:

Մերսինցիին մերսինցիին, ատանացիին ատանացիին հետ՝ ապահովաբար անելի սիրով ու համակրութեամբ պիտի ապրէր: Բայց մերսինցիին ու էրզրումցիին մէջ պարագան այն չէ: Յետամնաց աղջիկներ, մանաւանդ պատերազմի ու տարագրութեանց երեսէն այրիացած ու դեռահասակ հարսներ ամուսնանալու աճապարանքին մէջ խտրութիւն չեն դնել որեւէ այր մարդու միջեւ, որոնք յաճախ անգործ ու անվաստակ ըլլալով դիւրութեամբ կ'ընդունին ամուսնութեան որեւէ առաջարկ: Սակայն ուր օր վերջ կը սկսին փոխադարձ դժգոհութիւններ եւ կը վերջանան մէկ կողմին տունէն առնել քալելովը: Աղքատութիւնը պզտիկ պատճառ մը չէ այս ամէնուն մէջ: Շատ մը այրեր օրական նոյնիսկ չորաբեկ հաց մը չկրնալ հանելուն՝ կը լքեն կիներնին ու կ'երթան կենակցիլ ուրիշի մը հետ, որ պատրաստի հաց ունի, գոնէ ժամանակի մը համար:

[Հրց.] 9.- Ի՞նչ է ամուսնական կեանքը քայքայող պայմաններ [sic]: Ի՞նչ է անոնց դարմանը: Այս մասին՝ իւրաքանչիւր եպիսկոպոսին փորձառութիւնն ու կարծիքը:

Պատ.- Ամուսնական կեանքը ապականող ուրիշ պատճառներ ալ պակաս չեն, որոնցմէ են արեւցոյթիւն, խաղամոլութիւն, դատարկապորտութիւն՝ այրերուն կողմանէ, իսկ պճնասիրութիւն եւ նորոյթի սէր՝ կիներու կողմանէ: Դատաստանական խորհուրդը զբաղեցնող դատերէն մեծագոյն մասը ասոնց արդիւնքն են: Իսկ պարագաներու մէկմէկու շատ մօտիկ ըլլալու եւ բաց ըլլալու անպատեհութիւնը ուրիշ նոյնքան ցաւալի պատճառ մ'է դրացիներու մէջ գոյութիւն ունեցող տեսական վեճ ու կոխներուն: Այդ բացութիւնը ջնջել, վերցուցել է՝ մէջտեղէն պարտաւորիչ պատկառանքն ու ամօթխածութիւնը: Մեր կարծիքով այս անտեղութիւնները կրնան դարմանուիլ մէկ կողմէն գործ եւ զբաղում հայթայթելով անգործներուն, միւս կողմէն ալ քնակարանները կանոնաւորելով:

[Հրց.] 10.- Հասի-չհասի խնդիրներուն, ինչպէս նաեւ պսակադրութեան համար արգիլուած օրերու մասին ի՞նչ է ժողովուրդին այսօրուան ըմբռնումը:

Պատ.- Հասի-չհասի եւ պսակադրութեան արգելքի մասին ժողովուրդէն անելի անոր հովիւներուն ըմբռնումները հարցնել նպատակայարմար էր: Ժողովուրդը այդ եւ ուրիշ եկեղեցական արգելքներու մասին շատ հոգածու չէ ու յաճախ չի յարգեր զանոնք, պատճառը այն է, որ հովիւները կամայական կարգադրութիւններ կ'ընեն միոյն արտօնելով միւսին զրկելով

նոյն բանը, առանց բանաւոր պատճառի: Այս բանը յաճախողէպ է դժբախտաբար եւ շփոթութեան կը մատնէ հաւատացեալներու մտքերը՝ եկեղեցական կանոններու մասին: Հովիւները պէտք է յամենայնդէպս պինդ մնան իրենց պահպանութեանը յանձնուած կանոններու վրայ, համոզելու համար ժողովուրդը, թէ անոնք փրկարար կարգադրութիւններ են, եւ ոչ թէ կամայականութիւններ:

[Հրց.] 11.- Ի՞նչ է արդի երիտասարդութեան ըմբռնումն ու կեցուածքը հանդէպ ամուսնութեան եւ ամուսնական խնդիրներու:

Պատ.- Երիտասարդութեան ըմբռնումը աննպաստ չէ ամուսնութեան: Շատերը բոյն մը շինելու եւ ընտանեկան խաղաղիկ կեանքը ապրելու կը փափաքին: Եթէ ոմանք չեն հասնիր այդ փափաքին եւ ամուրի կեանքը կը շարունակեն, պատճառը այն է որ միջոց կը պակսի իրենց ճաշակները գոհացնելու եւ ճաշակները - ինչպէս յայտնի է - շատ սուր ու սուղ են ներկայիս: Եթէ եկեղեցին աշխատի ընտանեկան կեանքը իր նախկին պարզութեան դարձնելու, տարակոյս չկայ, որ երիտասարդութեան դժուարութիւնները պիտի դիւրացնէ եւ ամուսնացեալներու թիւը զգալապէս պիտի աւելնայ:



Թրիփփլիի Սոր Նուպարեան (1937) եւ Պաալպէքի Ազգ. վարժարանները (1939)

Գ. ԴՊՐՈՑ

[Հրց.] 12.- Քանի՞ դպրոց կայ իւրաքանչիւր թեմի մէջ, ի՞նչ է ապրոնց ուսման աստիճանը, ո՞րչափ ուսանող ունին անոնք:

Ծանօթ.- Նշանակել դպրոցներուն անունները, ապրոնց հաստատութեան կամ բացման թուականները են.:

Պատ.- Լիբանանի թեմը ունի 20 դպրոց, 2500է աւելի երկսեռ ուսանողներով: Ատոնց իննը Պէյրութ քաղաքին մէջ կը գտնուին, իսկ տասնեմէկը՝ գաւառները: Կեդրոնի Ս. Նշան հայ ազգային եւ Սահակեան⁴⁴ վարժարանները կարելի է սեպել բարձրագոյն նախակրթարան. ասոնք ունին իւրաքանչիւրը վեց դասարան: Բոլոր միւսները տարր., նախակրթարան եւ մանկապարտէզ են՝ երեք, առ առաւելն չորս դասարաններով: Դպրոցներուն տարեկան ընդհ. ծախքն է 27000 Սր. Ոսկի, որուն 500ը Բ. Գոմիսարութիւնը, 700ը Լիբանանի կառավարութիւնը կը վճարէ: Իսկ մնացեալները կը հոգացուի աշակերտներու թոշակներէն,

եկեղեցւոյ պնակներէն եւ հանդէսներէն: Ծնողները միջին հաշուով տղայ գլուխ հազիւ երեքուկէս Սր. Ոսկի կրթաթոշակ կը վճարեն: ՀԲԸՄիութիւնը բոլոր դպրոցներուն համար տարեկան 500 Անգլ. Ոսկի կը վճարէ: Բացի թաղային վարժարաններէ քաղաքին մէջ կը գտնուի բարձրագոյն վարժարան մը ՃԵՄԱՐԱՆ⁴⁵ անունով եւ մասնաւոր վարչութեամբ: Դպրոցներու անունները Հայ Ազգ. Վարժարան է, կան Սահակեան, Մեսրոպեան եւ Նուպարեան անուններով մկրտուած երեք վարժարան միայն, հաստատուած են 1922 թուականին: Ս. Նշանը անելի հին է⁴⁶: Այս տարի բացուած է նաեւ Անթիլիասի դպրանոցը, 38 աշակերտներով⁴⁷: Գաւառներու վարժարաններն են՝ Թրիփոլի, Ճըպէյ, Ղազիր, Ճունի, Պիքֆայա, Պաալպէք, Բայաք, Զահլէ, Ալէյ, Սայտա եւ Սուր: Այս վերջինը այս տարի չէ բացուած: Դպրոցներուն ամէնքն ալ վաւերացուած են եւ ընդի. տնօրէնն է Առաջնորդ սրբազանը:

[Հրց.] 13.- *Դպրոցներ ունի՞ն իրենց ուսման ծրագիրը, որո՞նք շինած են զանոնք:*

Պատ.- Կրթական ծրագրի պատրաստութիւնը հազիւ այս տարի գլուխ եկաւ, երկու մասով՝ մանկապարտէզի եւ նախակրթարանի մասեր: Անոնք պատրաստուած են պետական ծրագրի վրայ կարելոր փոփոխութիւններով: Պատրաստողն է Տոքթ. Յակոբ Թօփճեան⁴⁸, նախորդ ուսումնական խորհրդոյ հմուտ ատենապետը:

[Հրց.] 14.- *Ի՞նչ է իւրաքանչիւր դպրոցին տարեկան ծախսը եւ ի՞նչ կերպով կը հայթայթուին:*

Պատ.- Դպրոցական ծախսոց աղբիւրներուն վրայ խօսուած է 12րդ յօդուածին մէջ:

[Հրց.] 15.- *Ուսուցիչներ պատրաստուած անձե՞ր են. տեւակա՞ն է անոնց պաշտօնը, թե՞ ամէն տարի կը փոխուի: Ի՞նչ է ուսուցիչներու տարիքը եւ իւրաքանչիւրին մասնագիտութիւնը:*

Պատ.- Ուսուցիչներու մէջ մասնատրապէս պատրաստուածները բացառութիւն են: Մեծագոյն մասը ուսուցչական ասպարէզը ընտրած է տարբեր ասպարէզներու մէջ չլազողելուն համար, սակայն տարիներու ընթացքին բաւական հմտութիւն եւ ձեռնհասութիւն ձեռք բերած են շատերը այս ու այն ճիւղերու մէջ: Ուսումնական խորհուրդը որոշած է այս տարի մասնաւոր քննութեան ենթարկել ուսուցիչները եւ անոնցմէ միայն կարողագոյնները արտօնել պաշտօնավարելու: Ներկայիս պաշտօնավարող ուսուցչաց թիւը 93 է. 47 ուսուցիչ, 46 ուսուցչուհի. երկու հնչուն ոսկիէն մինչեւ 11 հնչուն ոսկի ամսաթոշակով՝ տասը կամ տասներկու ամիսներու վրայ:

[Հրց.] 16.- *Ուսուցիչներ եկեղեցի կ'երթա՞ն եւ կ'այցելե՞ն ուսանողներու ծնողաց: Ուսանողներ եկեղեցի կ'երթա՞ն, եւ իրենց ընդհանուր թիւին համեմատութեամբ որչափը եկեղեցի կ'երթայ:*

Պատ.- Ուսուցիչներու եկեղեցի երթալ ու չերթալը կամ աշակերտաց ծնողներու այցելել կամ չայցելելը նկատի առնուած չէ պատկան մարմիններու կողմէ: Միայն աշակերտներուն համար շաբաթական օր մը մասնատոր պատարագ կ'ըլլայ, ուր ներկայ կ'ըլլան նաեւ ուսուցիչներ:

[Հրց.] 17.- Ի՞նչ է Հայաստանեայց եկեղեցւոյ զաւակներէն օտար դպրոցներ գացողներուն [թիւը]. ո՞ր փարիքին մէջ կ'երթան անոնք օտար դպրոցներ եւ ի՞նչ է ուսումնական ասփիճանը այդ դպրոցներուն: Ի՞նչ պարճառով հայ ծնողքներ օտար դպրոց կը դրկեն իրենց զաւակները. փարեկան ո՞րչափ դրամ կը վճարեն անոնք օտար դպրոցներ իրենց զաւակաց համար:

Պատ.- Երկարոգի աշխատութեան կարօտ է Հայաս. եկեղեցւոյ զաւակներէն քանի՞ներու օտար դպրոցներ յաճախելու ստուգումը: Ասկից առաջ նմանօրինակ՝ փորձ մը եղած է Առաջնորդարանիս կողմէ եւ ստուգուած է, որ անոնց թիւը հազարէ շատ պակաս չէ: Ասոնցմէ ոմանք բարձր կրթութեան կը հետեւին, իսկ մեծագոյն մասը ծրիավարժութեան:

Դ. ՇԷՆՔԵՐ

[Հրց.] 18.- Ի՞նչ վիճակի մէջ են դպրոցական շէնքերը: Ազգ. կալուածներ՝ են ապոնք, եթէ ոչ՝ վարձուած շէնքեր: Տարեկան ո՞րչափ դրամ կը վճարուի վարձուած շէնքերու:

Պատ.- Կեդրոնի դպրոցական շէնքերու վիճակը արգահատելի է պարզապէս: Միայն Ս. Նշան եկեղեցւոյ աղջկանց եւ մանչոց վարժարանները քիչ մը կանոնատոր շէնք ունին քարուկիր են: Ս. Խաչ, Ս. Երրորդութիւն եւ Ս. Լուսատրիչ եկեղեցիներունը տախտակէ հասարակ տաղավարներ են: Ս. Աստուածածին եւ Ռըմէյլ վարձու կը բռնեն իրենց դպրոցները: Մագրաա իր սեփական քարուկիր շէնքը ունի⁴⁹, մասամբ Առաջնորդարանի, մասամբ ՀԲԸՄիութեան ծախքով կառուցուած այս տարի: Գաւառայիները անելի խեղճ են: Բայաքիւնը դարձեալ սեփական տախտակեայ տաղավար մ'է: Հողավարձ կը վճարեն դպրոցի եւ եկեղեցւոյ համար.- Սայտա՝ 6050, Ճունի՝ 3500, Թրիփոյի՝ 11000, Ճըպէյլ՝ 2000, Ղազիր՝ 5000, Ս. Խաչ՝ 6000, Ս. Լուսատրիչ՝ 2500, Ս. Աստուածածին՝ 26000, Ալէյ՝ 5500, Պիքֆայա՝ 1500, Բայաք՝ 2000, Պապլաթք՝ 1500, Չահլէ՝ 5000. համագումար՝ 77650 Սր. Դահեկան:

[Հրց.] 19.- Ազգային շէնքերէն քանի՞ն քարուկիր են եւ քանի՞ն փայտակերպ:

Պատ.- Եկեղեցիներուն շէնքերը նոյնքան խեղճ են որքան՝ դպրոցներունը: Միակ քարաշէն եկեղեցին Ս. Նշանն է ինչպէս յիշեցինք, որը չափազանց փոքր ըլլալուն, ժողովուրդին հազիւ մէկ-տասներորդը կրնայ պարունակել: Երկու տարի առաջ կազմուեցաւ եկեղեցասէր Տիկնանց Միութիւն մը՝ նոր ընդարձակ եկեղեցի մը շինելու հիշին տեղ,

կամ եղածը ընդարձակելու ծրագրով: Ասյօր պատրաստ ունի 2536 ու կէս Սր. Ոսկի: Աշխատանքը նոյն ատեն առաջ կը տարուի փութաջանութեամբ:

Ձեռնարկ կայ նոյնպէս նոր, ընդարձակ եկեղեցի մը շինելու ՆՈՐ ՄԱՐԱՇ թաղին մէջ, որուն համար նոյնպէս յատուկ Շինութեան Յանձնախումբ մը կազմուած է մարաշցի անձնուէր երիտասարդներէ եւ եռանդով յառաջ կը տանի իր յանձնառութիւնները: Մօտ հազար Սր. Ոսկի արդէն գումար մը առաջ բերաւ 15 օրուայ ընթացքին մէջ՝ պատրաստ դրամ եւ վարպետի ու մշակի խոստացուած օրավարձքի փոխարժէք: Արդէն հիմները լեցուած եւ պատերը բարձրանալու վրայ են: Ռըմէյլ թաղի ազգայիններն ալ ձեռնարկեցին հոն գտնուող միակ ազգապատկան հազար կանգունեաց հողին վրայ եկեղեցի մը ու դպրոց շինելու: Շինութեան Յանձնախումբը ժրաջանութեամբ կ'աշխատի: Ըէնքին յատկագիծը Առաջնորդարանի միջոցաւ արդէն իշխանութեանց մատուցուած է՝ արտօնագիր ստանալու համար:

[Հրց.] 20.- *Դպրոցի համար նոր շէնքերու պէտք կա՞յ: Եթէ այո՝ նշանակել մերձաւոր հաշիւով մը, թէ ո՞րչափ գումար պէտք է քարուկիր կամ փայտակերպ դպրոց մը շինելու համար եւ այդ գումարէն ո՞րչափը կրնայ հայթայթուիլ տեղւոյն ժողովուրդէն կողմէն:*

Պատ.- Ինչպէս որ նախորդ յօդածներէն տեսնուեցաւ, թեմիս 20 վարժարաններէն միայն Ս. Նշանի վարժարանը սեփական հողի վրայ կառուցուած նոր շէնք մ'է: Մնացեալները ամէնքն ալ վարձու հողի վրայ շինուած փայտեայ տաղավարներ են, արդէն մեծաւ մասամբ խարխլած: Ստիպողական պէտք կայ հետզհետէ նորերը շինելու ազգապատկան հողի վրայ եւ արդիական ոճով: Անոնց շինութեան ծախսը հիմակուց ճշտել կարելի չէ, նկատելով որ տեղւոյ, դիրքի եւ տարածութիւններու համեմատ կը փոխուին գիները: Ժողովուրդը անշուշտ իր կարելին կ'ընէ այդ շինութեանց համար, ինչպէս օրինակը կը տեսնուի, սակայն դժբախտաբար անոր կարողութիւնը շատ սահմանափակ է:

[Հրց.] 21.- *Ի՞նչ վիճակի մէջ են եկեղեցւոյ շէնքերը: Կը բաւե՞ն ժողովուրդի պէտքերուն, որո՞նք քարուկիր են եւ որոնք փայտակերպ:*

Պատ.- Տե՛ս յօդուած 18, 19 եւ 20:

[Հրց.] 22.- *Ձեր թեմին մէջ պէտք կա՞յ եկեղեցւոյ նոր շէնքերու: Եթէ կայ՝ ունի՞ք տրամադրելի գեպին, եւ տեղւոյն վրայ հաշիւ ընելով կրնա՞ք նշանակել մերձաւոր գումար մը՝ քարուկիր կամ փայտակերպ եկեղեցւոյ մը շինութեան համար եւ ըսել նաեւ թէ այդ գումարէն ո՞րչափը կրնայ տեղւոյն ժողովուրդը [հայթայթել]:*

Պատ.- Տե՛ս յօդուած 18, 19 եւ 20:

Ե.- ԲԱՐԵԿԱՐԳԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

[Հրց.] 23.- *Ի՞նչ է իւրաքանչիւր եպիսկոպոսին կարծիքը եկեղեցւոյ վարչական, ժամակարգական եւ եկեղեցականներու պատրաստութեան եւ*

անոնց ապրուստին վերաբերեալ խնդիրներու մասին: Եկեղեցոյ հոգետոր պաշտօնեաներուն վարձապրութեան համար կը կարծէ՞ք որ ամսական կամ տարեկան թոշակի դրութիւնը գործնական կ'ըլլայ: Կրնա՞ք վարձապրութեան հին եղանակին առաւելութիւններն ու թերութիւնները նշանակել:

Պատ.- Եկեղեցոյ վարչութիւնը մեզ կը թուի թէ շատ թոյլ է: Իշխանութիւն ըսուածը գոյութիւն չունի բացարձակապէս. ո՛չ յանցատորը կը պատժուի, ո՛չ արժանատիը կը վարձատրուի ըստ արժանւոյն: Ժողովուրդը քահանային կ'անսաստէ, քահանայն՝ եպիսկոպոսին եւ այսպէս մինչեւ դասակարգութեան վերին աստիճանը: Ուրեք ուրեք աշխարհականները ամէն ինչ են, ուրեք ուրեք ալ՝ ոչինչ: Կը գտնուին անհատներ՝ հոգետրական թէ աշխարհական, որ իրենց կիրքեր գոհացնելու համար եկեղեցին ու դպրոցը պատրուակելով համայնքը վեր ու վար կ'ընեն ու՝ «կեցիր» ըսող մը չի գտնուիր դժբախտաբար: Պարտականութիւններ որոշապէս գծուած չեն, պարտականութեան տէրերը կա՛մ ամէն բան կ'ընեն կա՛մ քնաւ չեն ընել: Կը խորհինք, որ ժամանակ է այլեւս վերջ տալու անիշխանութեան, ժամանակ է ճշտելու եկեղեցականին ու աշխարհականին, վարիչին ու վարելիին պարտուց ու իրաւանց սահմանները եւ պարտաւորեցնել զանոնք ամուր պահելու իրենց տեղերը:

Ժամակարգական խնդիրներ ըսելով եթէ պիտի հասկնանք աղօթքի եւ պաշտամանց համար սահմանուած մասնատու օրերն ու ժամերը, հերիք է ըսել որ ժողովուրդը եւ ինչու՞ չէ՝ խոստովանիլ թէ հոգետրականութիւնը ժամակարգութիւնը կը գտնէ երկար եւ ճանճրացուցիչ: Եթէ աղօթքը մտքով ու հոգով վերանալ ու յափշտակուիլ է՝ մարդկօրէն հնար չէ ժամերով յափշտակուած մնալ եւ երկինքը միայն խորհիլ. երկրատու պարտականութիւններ ալ կան, որ շուտով իրենց դառնալու կը ստիպեն յափշտակուողը: Ուստի վերացմամբ ու յափշտակութեամբ աղօթելու համար օգտակար, նոյնիսկ՝ ստիպողական կը գտնենք հաւատացելոց հոգետու շինութեան համար գոնէ կէս առ կէս համառօտել ժամակարգութիւնները, ընթերցուածներուն լեզուն փոխել, քարոզով կենդանացնել, երաժշտութիւնը կանոնաւորել:

Եկեղեցականներու պատրաստութեան խնդիրը յաճախ ծեծուած է առանձինն ժողովներու եւ թէ հրապարակաւ՝ թերթերու մէջ, սակայն դժբախտաբար հիմնական դարման մը չէ եղած ցարդ: Եկեղեցական պատրաստելու երեք միջավայրեր ունեցած ենք թրքահայութեան մէջ. Դպրեմակնքը, Երուսաղէմն ու Սիսը, որոնք անւերդ է ըսել որ տասնեակներով շրջանաւարտներ տուած են ազգին, սակայն անոնցմէ եկեղեցականութեան նուիրուողները հազիւ մատու վրայ կը համրուին ներկայիս, որովհետեւ երեք կղերանոցներն ալ բոլորովին անւերդ լայնամտութիւն մը ցոյց տուած են, թոյլ տալով որ ուսանողները ազատ ըլլան որեւէ ասպարէզ ընդգրկելու, մինչ իրենց պաշտօնն էր միայն

հոգեւորականներ հասցնել, ապա թէ ոչ ի՞նչպէս արդարացնել մէկին Դպրանոց, միա երկուքին՝ Ժառանգաւորաց անունները:

Եկեղեցականներու ապրուստի խնդիրն ալ փշոտ խնդիր մը եղած է միշտ: Դարեր առաջ երբ մարդկութեան մեծամասնութիւնը միայն հացի գնով կ'աշխատէր ու կ'ապրէր, ձեռատուրքով ու ողորմութիւնով ապրիլը առանձնաշնորհումը սեպուած էր՝ Աստուծոյ պաշտօնեաներուն մասնայատուկ: Սակայն հիմա ամենայնեւին գործաւորը օրավարձ, ամսավարձ կամ տարեվարձ կը ստանայ ու անով գնահատուած կը զգայ ինքզինքը, կը ճանչնայ իր արժէքը, մինչ Աստուծոյ պաշտօնեան հացագնով ապրողներու կարգին իջած եւ արժանապատուութիւնը կորսուած է բոլորովին: Հարցնել անգամ անելորդ է, թէ հոգեւոր պաշտօնեաներուն վարձատրութեան համար ամսաթոշակի դրութիւնը գործնական է: Հարցնելու է թէ օգտակար եւ պատուաւոր է այն: Պատասխանը անշուշտ հաստատուն պիտի ըլլայ:

Արդ, ինչ որ օգտակար ու պատուաւոր է, պէտք է գործնական ըլլայ եւ անօգուտն ու անպատիւը դադրի գործածութենէ: Եկեղեցիներուն ամէնքն ալ, բացի մերինէն, կը վճարեն իրենց պաշտօնեաները այս կամ այն ձեւով եւ գոհ են արդիւնքէն: Վճարուած պաշտօնեան իր ապրուստի մասին կանխաւ ապահով ըլլալով, բոլոր կարողութիւնները կը կեդրոնացնէ իր պաշտօնին ու գործին վրայ, մինչ օրական հացին մտահոգութիւնը ունեցող պաշտօնեան պէտք եղած ուժով ու կորովով չի կրնար մօտենալ իր գործին:

[Հրց] 24.- Հայ դպրոցներու նախակրթարան ուսմանց ծրագրին միաձեւութեան մասին ի՞նչ է իւրաքանչիւր առաջնորդի կարծիքը:

Պատ.- Մեր դպրոցներու կրթական ծրագրի միաձեւութեան մասին երկու կարծիք չի կրնար գոյութիւն ունենալ: Հակառակ թափուած ճիգերուն եւ վատնուած գումարներուն, մեր վարժարաններուն ետ մնալուն միակ պատճառը անոնց ծրագրերուն բազմօրինակութիւնն է անկասկած: Ոչ թէ իւրաքանչիւր վարժարան տարբեր ծրագրի ունի, այլ նոյնիսկ տարին կամ վեց ամիսը անգամ մը կը փոխէ, այսինքն վեց ամսուան շինածը յաջորդ վեց ամսուան մէջ քանդելու կ'աշխատի: Ոչ միայն թեմի բոլոր վարժարանները միակ ծրագրով մը վարուելու են, այլեւ բոլոր բոլոր թեմերուն վարժարանները նոյն ծրագրով քալելու են, որպէսզի տեղէ-տեղ փոխտող սաները պատեհութիւն ունենան շարունակելու իրենց ուսման ընթացքը ճիշտ ընդմիջուած տեղէն:

[Հրց.] 25.- Օտար եւ հայ յարանուանութիւններու կողմէն յայտնի կամ գաղտնի մարդորսութիւններ կա՞ն թեմերու մէջ, եւ եթէ կան՝ ի՞նչ հարկերու փակ եւ պայմաններու մէջ տեղի կ'ունենան ակոնք:

Պատ.- Մարդորսութիւններ միշտ եղած են ու կ'ըլլան ու պիտի ըլլան մեր վրայ թէ՛ օտար եւ թէ՛ հայ յարանուանութիւններու կողմէն: Մեր ժողովուրդին անկազմակերպ վիճակը, տարականոն կեանքը ու կենցաղը լաւագոյն խայծեր են մարդորսներուն եւ միշտ սուր կը պահեն անոնց

ախորժակը: Մարդորսները յաճախ կը մօտենան մերիններուն հին զգեստ, ալիւր, դլը.⁵⁰ դրամական օգնութիւն են. ի ձեռին, բայց անլի յաճախ ծրի կրթութեան եւ հողի խոստումով:

[Հրց. 126.- Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմերու ժողովուրդին Կաթողիկոսական Աթոռին հետ բարոյական ու նիւթական կապերը նորոգելու եւ ամրապնդելու համար ինչպիսի՞ միջոցներ կրնաք մտածել: Կաթողիկոսական Աթոռը զանձանակ ունի՞ իրաքանչիւր թեմի եկեղեցիներուն մէջ, եւ եթէ ունի՞ ժողովուրդը գիւրէ՞ անոնց գոյութիւնը:

Պատ.- Կաթողիկոսարանը ժողովուրդին հետ միացնող բարոյական կապերը նորոգելու եւ ամրապնդելու միջոցը մէկ հատ է՝ զօրացնել կաթողիկոսութիւնը, իր կոչման համապատասխան բարձրութեան վրայ դնել զայն, ոսկից արծուի բիբերով դիտել ժողովուրդին շարժումները, հասնի հոն՝ ուր սխալ քայլ մը կ'առնուի, վնասակար որոշում մը կը տրուի, անկարգութիւն մը կը պատահի, վճռապէս միջամտել, դատել ու դատապարտել: Տարակոյս չկայ, որ ժողովուրդը այդ ատեն հոգեւին պիտի փարի իրեն եւ չպիտի գտնուի որեւէ ուժ, որ կարենայ կտրել կամ նոյնիսկ թուցնել հօտն ու հովիւը իրարու միացնող կապը:

Պէյրութի ամբողջ թեմին մէջ միայն քաղաքի երկու եկեղեցիները՝ Ս. Իսաչ եւ Ս. Երրորդութիւն Աթոռի պնակ ունին, որ ամէն Կիրակի կը շրջագայի ժողովուրդին մէջ, մասնատր աթոռակալի մը ձեռքով. վճարողները գիտեն թէ որու կը վճարեն:

Ի Դիմաց Վարչ. ժողովոյ Լիբանանահայոց

Ատենադպիր

Ատենապետ Նախագահ

Տր. Սրապեան [Յովհաննէս]⁵¹ Յ. Թօփճեան Ներշէ Արքեպիսկոպոս
Կարոյեան⁵²

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Թէոդիկ, *Ամէնուն Տարեցոյցը, 1922, ԺԶ. Տարի*, Բ. տիպ, Հալէպ, 2010, էջ 436:

² Գիտենք որ մինչեւ շուրջ 3000ի հասնող գաղթական հայեր բերում են Բայաթի շրջանը՝ շոգեկառքով, յստակ չէ սակայն, անոնց յետն (Hilmar Kaiser, "The Armenians in Lebanon during the Armenian Genocide", *Armenians of Lebanon: From Past Princesses and Refugees to Present-Day Community*, ed. by Aida Boudjikianian, Haigazian University & The Armenian Heritage Press, 2009, էջ 31-56): Հալէպէն գալով Բայաթէն անցած է նաեւ զէյթունցի գաղթականներու խումբ մը. անոնք հոն պաշտօնավարող Սամուէլ անունով զինուորական հայ բժիշկի մի կողմէ հիւանդ 'կ'ախտաճանաչուին' եւ «բաւական օրեր» Բայաթ մնալէ ու «հանգստանալէ» ետք կը շարունակեն իրենց տարագրութիւնը դէպի հարաւ (Միսաք Սիոսեռեան (Մ. Ունեցի), *Պարմութիւն Զէյթունի (1409-1921)*, Լիբանան, 1996, էջ 479):

³ Պէյրութահայութիւնը ենթարկուած է աչալութք վերահսկողութեան, իրեն արգիլուած է ազատ տեղափոխութիւնը... (Kaiser, նոյն):

- ⁴ Կը հակինք այն համոզումին, որ Քարանթինայի եւ միա քեմփերը արդիւնքն էին ծննդավայր վերադառնալու համար Պէյրուֆ հոսող գաղթականներուն եւ ոչ թէ յառաջացած էին Եղեռնի օրերու տարագրութեան պատճառով: Աքսորավայրերէն ծննդավայրեր վերադարձի կամուրջի, քան թէ նորահաստատ եւ մնայուն գաղթականին մը դերը պէտք է ունեցած ըլլան Պէյրուֆի այս գաղթականները՝ գէթ սկզբնապէս, եւ յետոյ միայն - Կիլիկիոյ Բ. պարպումէն ետք - անոնք վերածուած ըլլան երկարաժամկետ գաղթականային:
- ⁵ Օրինակ, շահեկան է Տիարպեցիի իթթիհատական դահիճներէն Սալէի Հաքիմի պարագան, որ «*քղեցի 30 անձերէ բաղկացեալ հայ ընտանիքի մը 29 անդամները ջարդելէ ետքը մանկամարդ աղջիկ մը իրեն համար վար կը դնէ եւ ապա կ'ամուսնանայ եւ պաշտօնով Պէյրուֆ կը հաստատուի...*» (Լիբանանահայ Համայնքը 1915-1990 Թաւականներին (Ըստ Արիսիայի Փաստաթղթերի), կազմ. Գոհար Աագեան, Հրտ. Հայաստանի Ազգային Արխիւ, գլխ. խմբ.՝ Ամատունի Վիրաբեան, Երեւան, Հայկարի Տպարան, 2017, էջ 12. նաեւ՝ Kaiser, էջ 53):
- ⁶ Հոկտեմբեր 1918ին արաբական, եւ Դաշնակից զօրքեր կը մտնեն Դամասկոս, իսկ 1918 Նոյեմբերի սկիզբը՝ հայ կամատրներ Պէյրուֆ (Սարգիս Թորոսեան, *Հարդանէից Մինչեւ Պաղեստին*, անգլերէնէ թարգմ.՝ Լիլիթ Թութխալեան, Հրատ.՝ ՀՀԳԱ Յեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտ, 2012):
- ⁷ Օրինակ, տարագիրներուն Յորդանանէն տունդարձը կը սկսի 10 Նոյեմբեր 1918ին:
- ⁸ Աագեան, էջ 13:
- ⁹ Որբերու պատասխանատուններէ Միս Ֆրիւրսըն իր որբերը կը փոխադրէ Շմյան, Միս Ֆորմէն՝ Անթիպաս, Մըսթըր Թրեմիս՝ իր մանչերը Ճիպէյ, իսկ Ղալիկեան՝ հայկական որբանոցը՝ Ճինի («Գրիգոր Քինյ. Պօղարեան, «Հայ Գաղթականութիւն Լիբանանի»՝ *Սուրիահայ Տարեցոյց, Պարկերագարը, 1924, Բ. տարի*, աշխատ.՝ Մ. Աճէմեան, Մ. Սիսեռեան, Ե. Ոսկերիչեան, Հալէպ, Սուրիա, Տպագրութիւն Զարեհ Պէրպէրեան, Գահիրէ, 1924, էջ 42):
- ¹⁰ Անյորդ չէ ըսել, թէ սպիտակ կը մնայ տակաւին Հայ Ազգային Միութեան համապարփակ պատմութեան էջը: Այս պատմութիւնը կարետոր է այն առումով, որ ՀԱՄը կը լեցնէր Մերձատր Արեւելքի արաբական երկիրներու մէջ յառաջացած հայկական 'պարապ մը', որ կ'երկարէր Ա. Համաշխարահայինի աւարտ-ձինարդար-Ազգերու Լիկային կողմէ Բրիտանական եւ Ֆրանսական հոգատարութեան յանձնում շրջանին (1917-23): Արդարեւ, ՀԱՄը շատ արագ տարածուեցաւ այս շրջաններուն մէջ եւ պաշտօնական հանգամանքով հանդիսացաւ այնտեղի իին գաղութներու նաեւ տարագիր գանգուածներու քաղաքական-ընկերային-տնտեսական այն մարմինը, որ հայկականօրէն գրադեցաւ իրենց հետ եւ ներկայացուց զիրենք՝ յաչս տեղական իշխանութիւններուն:
- ¹¹ Ազգային Պատուիրակութիւնը յառաջացած էր Գեորգ Կաթողիկոսի նախաձեռնութեամբ 10 Նոյեմբեր 1912ին: Վեհափառը Պօղոս Նոպարին պարտականութիւն եւ իրաաստօթիւն կը յառաջադրէր ներկայացնելու հայութիւնը եւրոպական ատեններու մէջ, նաեւ հետապնդելու եւ պաշտպանելու հայկական շահերը, հայկական դատը, հայ ժողովուրդին իրատմքները:

¹² Ասոր նախորդած է Հայ Ազգային Պատուիրակութեան պետ Պօղոս Նուպարի ուղղուած նախորդ վարչութեան 2 Դեկտեմբեր 1918 թուակիր «ընդարձակ գրութիւն»ը, զոր ի ձեռնի չունինք:

¹³ Ֆրանսացի ծովայինները Պէյրուֆ ցամաք կ'ելլեն 7 Հոկտեմբեր 1918ին (Pierre Rondot, *Cahiers de L'Afrique et de L'Asie, [Vol.] IV, Les Chrétiens d'Orient*, J. Peytrennot & Cie, Editeurs, Paris, 1955 էջ 276):

¹⁴ Հայ Ազգային Միութեանը հիմնուած էր եգիպտոս՝ «Ազգային միասնականութեան առաջադրանքով», Նոյեմբեր 1916ին: «Միութեան անդամ եգիպտահայ քաղաքական կազմակերպութիւններու ներկայացուցիչներն էին՝ Սապահ-Գիլեան, Միհրան Տամատեան եւ Արտաազդ Հանըմեան» (*Հայկական Համայնքային Կառոյցները եգիպտոսի Մէջ*, համադրեց՝ Տոքթ. Սուրէն Պայրամեան, Հրատ.՝ Գահիրէի Ազգային Առաջնորդարանի Բօլ Քիլիտեան Հրատ. Ֆոնտ, Գահիրէ, Նուպար Տպագրատուն, 2017, էջ 98): Պէյրուֆի մէջ ՀԱՄԸ կը կազմակերպուի ամենաշուտը 1918ի վերջերուն, եգիպտոսի ՀԱՄԷն եկած երկու (հաւանաբար անոնցմէ մին Մկրտիչ Եփրէմեան) «պատասխանատու անձեր»ու ժամանումով: Ասոնց միջոցով կ'ընտրուի Պէյրուֆի Ազգային Միութեանը (Սիսակ Վարժապետեան, *Հայերը Լիբանանի Մէջ*, Ա. Հալոբ, Պարկերազարդ, Բ. տիպ, Պէյրուֆ, Տպ. Համազգայինի Վահէ Սէթեան, 1982, էջ 432): Պէյրուֆի մէջ անոր առաջին վարչութեան (որ գուցէ գործած է մինչեւ Յունիս 1919) ատենադպիրն էր Մովսէս Տէր Ստեփանեան, փոխնախագահը՝ Յովհաննէս Գ. Կիւպեցեան, անդամներ՝ Միհրան Քեհիայեան, Տոքթ. Պահատուրեան, Աբրահամ Սարաֆեան (Վարժապետեան, էջ 435): 1919 Յունիսէն սկսեալ զայն կ'ատենապետէ Պաղտասար Մելքոնեան, իսկ կ'ատենադպրէ Հայր Պօղոս Արիս: 1920ին կազմը փոփոխութեան կ'ենթարկուի. ատենապետ կը մնայ Մելքոնեան, Վահրամ Վարժապետեան՝ փոխատենապետ, Ն. Կերկերեան՝ ատենադպիր, Ա. Գալուստեան՝ գանձապահ, Մ. Նաճարեան, Մ. Չատրճեան եւ Մ. Պօղոսեան՝ անդամներ եւ կ'ունենայ երկու վճարեալ պաշտօնեայ (Մ. Աճէմեան, Մ. Սիսեռեան, Ե. Ոսկերիչեան, էջ 260-1): Անոյ ետք, Կիլիկիոյ պարպումի յաջորդ հանգրուանին, ՀԱՄԻ Պէյրուֆի օղակը դարձեալ փոփոխութիւններու կ'ենթարկուի, ատենապետ կը դառնայ Ա. Ճ. Սարաֆեան, իսկ ատենադպիր՝ Ն. Կերկերեան: Այս վարչութիւնը պաշտօնի վրայ կը տեսնենք գէշ Ապրիլ-Նոյեմբեր 1922 շրջանին (Ասազեան, էջ 14, 34, 37):

¹⁵ ՀԱՄԸ նաեւ կը դառնայ ստուգեալ տեղեկատուութեան գրասենեակ, պատասխանելով այլ զաղութներէ պաշտօնապէս ուղղուած հարցումներու՝ անձնական մանրամասնութիւններու մասին: Օրինակ, Մերսինի Որբանոցի վարչութիւնը լուսաբանական տուեալներու համար կը դիմէ ՀԱՄԻ Պէյրուֆի վարչութեան («Մերսինի Որբանոցը» ձեռագիր անաարտ ուսումնասիրութիւն):

¹⁶ Ասազեան, էջ 13:

¹⁷ Որովհետեւ խնդիր կը դառնայ այս ժամանածները սնուցանելը. «եթէ այս կացութիւնը այսպէս շարունակուի, ծննդոյ այս խստաշունչ եղանակին մերկ, անտուն եւ անգործ բազմահազար տարագիրներ մահուան վրանգին պիտի ենթարկուին...» (Ասազեան, էջ 13):

¹⁸ Տեղեկագրէն կը պարզուի, որ ՀԱՄԻ նախորդ վարչութիւնը տարագիրներու տաճնապալի կարիքներուն համապատասխան չգործած ըլլալով, «կուտակուած

խնդիրները «...ծեռնթափ» ընելու համար 8 Յունիս 1919ին «ստիպողաբար» կը գումարով ազգային ընդհանուր ժողով մը որ կ'ընտրէ նոր մասնաժողով մը:

¹⁹ Այսպէս կ'ենթադրենք, որովհետեւ այդ թուականներուն ՀԲԸՄը կ'առաջադրէր համապարփակ պատկերն ունենալ Միջին Արեւելքի հայութեան՝ համապատասխան ծրագրատրում կատարելու եւ քայլեր առնելու մտասեռնոմով:

²⁰ Տասնչեայ ձեռագիր նամակ-տեղեկագիր: Այս եւ յաջորդ նամակին ձեռագիրը նոյնն է եւ կը թուի գրուած ըլլալ Հայր Պօղոս Վրդ. Արիսի կողմէ: Հայր Պօղոս Արիս (Հալէպ, 1889—Պէյրութ, 1961), Չմամառու միաբանութեան անդամ, 1912ին կը ստանձնէ Պէյրութի Հայ Կաթողիկէ Եկեղեցոյ հոգաբարձութիւնը, հիմնադիրներէն է եւ առաջին քաղաքապետը՝ Պուրճ Համուտի: Տարագիրներու օգնութեան եւ տեղատրման խնդրով ունեցած է հիմնական դերակատարութիւն: Լիբանանի Հայօճակի կազմատրման շրջանին, անի քան չորս տասնամեակ ունեցած է ազգային-ծառայողական հսկայ գործունէութիւն, եղած է իր ժամանակի ամենէն աշխուժ հանրային գործիչներէն:

²¹ Միհրան Տամատեան (1863-1945), ՌԱԿի անդամ, ազգային քաղաքական գործիչ, Զինադարարէն ետք Կիլիկիոյ հայ ղեկավարութեան գլխատուր դէմքերէն, 1920-30ականներու լիբանանահայ գաղութի կազմակերպական աշխատանքներու գլխատուր մասնակիցներէն:

²² Դաշնակիցներու յաղթանակէն ետք, Օսմանեան Կայսրութենէն գրաւուած Սուրիա-Լիբանանի վրայ հաստատուած ֆրանսական գերագոյն իշխանութիւնը:

²³ Անձանօթ կը մնայ այս տոմարներուն ներկայ գոյութիւնը: Արիսիային նիւթերու, մանաւանդ նշեալ տոմարներուն նիւթերը կրնային կարետուր չափով լուսաբանել իրավիճակը:

²⁴ Տե՛ս՝ ծանօթ. 15:

²⁵ Շատ հաւանաբար նկատի ունի Հայֆան:

²⁶ Նկատի ունի *Քարանթին*ն:

²⁷ Հաւանաբար նկատի ունի մինչեւ մաքրանոցի մէջ աքսորեալներու հոսքը ուղղորդելը յառաջացած կայանները:

²⁸ 31 Յուլիս-28 Հոկտեմբեր 1919 շրջանին անի քան 3100 տարագիրներ Փոր Սայիտէն վերադարձան Մուսա Լեռ՝ (անի մանրամասն տե՛ս՝ Vahram L. Shemmassian, *The Musa Dagh Armenians: A Socioeconomic and Cultural History 1919-1939*, Հայկազեան Համալսարանի Հրատ., Պէյրութ, 2015, էջ 5):

²⁹ Յետազային այս թիւը կը շատնայ, հասնելու համար – ըստ ոմանց – մինչեւ 40,000ի (Վարժապետեան, Ա. Հտր, էջ 294):

³⁰ Ֆրանսուա Ժորժ Փիքօ (1870-1951): 1917-19՝ Բարձր Յանձնակատար (քումիստը)ն էր Սուրիա (ներառեալ Լիբանան)-Պաղեստինի:

³¹ Տոքթ. Պարտասարա Մելքոնեան (Ատանա, 1877—Պէյրութ, 1947): Շրջանաարտ Պէյրութի Սէն Ժոզէֆ Համալսարանի թժշկական ճիւղէն, Փարիզի մէջ մասնագիտանալէ ետք, 1903ին կը հաստատուի Պէյրութ, ուր կը ծառայէ հանրային գործունէութիւն:

³² Շատ հաւանաբար նկատի ունի Պէյրութի Ամերիկեան եւ Սէն Ժոզէֆ համալսարաններու հայ ուսանողներու մէկ մասը:

³³ Այս եւ յաջորդ նամակը գրուած են անուանաթերթ ունեցող նամակաթուղթերու վրայ (ի տարբերութիւն տեղեկագրին):

- ³⁴ Այս նամակին ծեռագիրը կը տարբերի նախորդ երկուքէն: Ասիկա չի կրեր նաեւ ատենադպիրին ստորագրութիւնը՝ ի տարբերութիւն նախորդ երկուքին: Հաւանաբար նամակին հեղինակը նոյնինքն Մելքոնեանն է, որուն հայերէնը կը գիջի նախորդներուն:
- ³⁵ Հանրի Կուրօ (1867-1946): Բարձր յանձնակատար Լիբանանի՝ Նոյեմբեր 1919էն մինչեւ 1923:
- ³⁶ «Տեղեկագիր Լիբանանի Թեմին» վերնագրեալ, A4 չափի 13 թերթերու վրայ մեքենագրուած այս փաստաթուղթը իրայայտուկ է անով, որ քննականօրէն կը տեղեկագրէ շուրջ տասնամեակէ մը ի վեր Լիբանան կայք հաստատած հայ գաղթականութեան 1930ականներու սկիզբի կրթական, եկեղեցական, ընտանեկան, ընկերային, տնտեսական, կենցաղային վիճակը եւ զայն կը ներկայացնէ պատասխանատու հայու նախանձախնդրութեամբ ու սրտցատութեամբ:
- ³⁷ Հաւանաբար նկատի ունի Վահան Վարդապետեանի (Կիւրին 1882-Պէյրուս, 29 Սեպտ. 1926) եւ Սարգիս Տխրունիի սպանութիւնները (1929): 1929ին կատարուած է նաեւ այլ սպանութիւն մը՝ Ազատ Սարգիսեանի (Վան 1909-Պէյրուս, 16 Սեպտեմբեր 1929), որուն դրդապատճառը մեզի անծանօթ կը մնա (եստ Ս. Նշան եկեղեցիի թաղմանական տոմարի):
- ³⁸ Տեղեկագրին այդ նիւթերը չունինք:
- ³⁹ Վերանուանուած Ս. Յակոբ:
- ⁴⁰ Որ ներկայիս կը կոչուի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցի:
- ⁴¹ Ս. Յարութիւն:
- ⁴² Յիրաւի, պետութիւնը կը հրկիզէ քեմիլը 1933ին:
- ⁴³ Հաւանաբար տասանորդ կամ ազգային տուրքի հասկացութիւնը:
- ⁴⁴ Կը գտնուէր քեմիլին մէջ եւ 1933ի քեմիլի մեծ հրդեհին ճարակ դարձաւ:
- ⁴⁵ Լեւոն Շանթ եւ Նիկոլ Աղբալեան Պէյրուս կը ժամանեն 1929ին եւ կը հիմնեն Համազգայինի «Պէյրուսի Հայ Ծննդարան»ը, որ պետականօրէն կը վաւերացուի 1930 Փետրուարին, եւ իր դռները կը բանայ Մարտ 1930ին (Անի Ֆիշենկեան, «Հայաստանի Հանրապետութեան Անկումէն ետք Վտարանդի Մտատրականներու Գործունէութիւնը Սուրիոյ Մէջ», *Հանդէս Ամսօրեայ*, ՃԼԲ տարի, 2018, սիւնակ 495):
- ⁴⁶ Այդ պատմութիւնը կ'երթայ ետ, գէթ մինչեւ 1845 (Վարժապետեան, էջ 115)
- ⁴⁷ Դպրեկանքի դասերը կը սկսին 13 Հոբկտեմբեր 1930ին, 37 աշակերտներով (Բարգէն Ա. Աթոռակից Կաթողիկոս, *Պապմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ. 1441-էն մինչեւ Մեր Օրերը*, Անթիլիաս, Տպ. Դպրեվանոց, 1939, էջ 1039):
- ⁴⁸ Դոկտ. Յակոբ Թփեքեան (Այնթապ, 1882—Պէյրուս, 1951): Ազգային-հասարակական, կրթական գործիչ, շրջանաարտ Էքմիաձնի Գէորգեան Ծննդարանէն, 1905ին պաշտպանած է դոկտորական ասպրտաճար, Հալլէի Համալսարանին մէջ: 1925ին կը հաստատուի Պէյրուս:
- ⁴⁹ Մագրաայի ղալոցաշէնքը՝ միջակ մեծութեամբ գետնայարկ կառոյց մըն էր, որ կը գործածուէր նաեւ իբրեւ եկեղեցի (տեսակցութիւն իրեն աշակերտած Էօթէն Աագեանի հետ, Ապրիլ, 2018):
- ⁵⁰ Այս կրճատուած բառը կարելի չեղաւ վերծանել:

⁵¹ Ծնած է Խարքերդ, 1899ին, ապրտած է Պէրոյի Ամերիկեան Համալսարանի ատամնարութական բաժինը: 1923-30՝ վիրաբուժ-ատամնարութն է Near east Reliefի Ղազիրի կուրանցի, եւ այլեայլ որբանոցներու:

⁵² Եղիշէ Արք. Կարոյեան (Ատանա, 1873—1943, Պէրոյ,)։ Լիբանանի Հայոց Թեմի առաջնորդ 1929-1940, ապա՝ կաթողիկոսական տեղապահ:

TWO DOCUMENTS ON THE LIFE OF THE LEBANESE ARMENIANS

A.- A PAGE ON ARMENIANS IN BEIRUT, 1918-20

B.- LEBANESE ARMENIANS IN THE EARLY 1930S

(Summary)

ANTRANIK DAKESSIAN

adakessian@haigazian.edu.lb

The 20th century history of the Armenian community of Lebanon has an excess of blank pages. Several events, details and aspects need further research and clarification. The author notes that particularly the period between 1914 and the 1940s needs extensive research and examination in order to generate a reliable and relatively satisfactory narrative of the Armenian community of the time.

The author offers two unpublished documents which shed light on a section of the said period.

The first document provides certain data and information on the conditions of the Armenians in Beirut between 1918 and 1919, when the survivors of the exiled Armenians pour into Beirut from Damascus and the Arab hinterland to return to their hometowns in Cilicia, and the preoccupations of the Armenian authorities. The second document is a report produced by the Armenian Prelacy of Beirut. The report focuses on the social, institutional, educational, family, organizational, residential and economic conditions of the Armenians in Lebanon in the early 1930s.